ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասն առաջին դասարանում՝ խաղից մինչև ուսումնական գործունեություն

Հեղինակ – Հրանուշ Թորոսյան

Երևան 2023

Բովանդակություն

1.Ներածություն

2.Գլուխ 1. Գրաճանաչության գործընթացի կազմակերպման փուլերը և դրանց ընթացքում իրականացվող խաղերը

3.Գլուխ 2. Զննականության դերը գրաճանաչության ընթացքում և դրա օգտագործման մանկավարժահոգեբանական սկզբունքները

4.Գլուխ 3. Գրաճանաչության ընթացքում դիդակտիկ խաղերի օգտագործման իմ փորձից

5.Եզրակացություններ

6.Օգտագործված գրականություն

Ներածություն

ՀՀ «Կրթակարգի»[1] համաձայն 2007-2008 ուսումնական տարվանից դպրոց են հաճախում 5. 5-6 տարեկան երեխաները։ Այս տարիքը համընկնում է նախկին նախադպրոցական տարիքի հետ։ Հոգեբանները գտնում են, որ նախադպրոցական տարիքում գործունեության առաջատար տեսակը խաղն է։ Խաղն առաջատար է դառնում ոչ այն պատճառով, որ ժամանակակից երեխան, որպես կանոն, իր ժամանակի մեծ մասն անց է կացնում խաղալով։ Խաղը երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է առաջացնում, երեխայի մեր սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը, որոնք առաջատար են դառնում դպրոցական տարիներին։

Դասվարները հաճախ են ասում, որ իրենք ժամանակ չունենք խաղալու համար։

Իսկ, երբ ասվում է, որ պետք է խաղալ, նրանք խաղում են վաղուց արդեն անհետաքրքիր դարձած և որևէ դիդակտիկ նշանակություն չունեցող խաղեր («Թզուկներ և հսկաներ», «Գիշեր-ցերեկ», «Անտառում սունկ ենք հավաքում» և այլն)։ Անշուշտ, այսպիսի խաղեր ևս անհրաժեշտ է կազմակերպել, որովհետև դրանք աշխուժացնում են աշակերտներին, սակայն միայն դրանք և այն էլ՝ բացմիցս կազմակերպելը ուսումնական գործընթացը ոչ միայն հետաքրքիր չեն դարձնում, այլև պարզունակացնում են այն, դարձնում անարդյունավետ։ Հենց այս դեպքում է, որ դիդակտիկ խաղերը պետք է օգտագործել ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար։

Դիդակտիկ խաղերի միջոցով կարելի է ստուգել հին նյութը, հաղորդել նոր նյութը, ամրապնդել ձեռք բերված գիտելիքները և կարողությունները։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դիդակտիկ խաղերը նպաստում են երեխաների ուշադրության և հիշողության զարգացմանը։ Դիդակտիկ խաղերի

---

[1] ՀՀ «Կրթակարգ», «Անտարես», Երևան, 2004։

ժամանակ երեխաներն ավելի շատ գիտելիքներ են մտապահում, ավելի վաղ ու հեշտությամբ է դրսևորվում նրանց ուշադրությունը կենտրոնացնելու, մտապահելու և մտաբերելու գիտակցական նպատակը: մեր մանկավարժական գործության ընթացքում համոզվել ենք, որ դիդակտիկ խաղերը շատ մեծ ազդեցություն են գործում ինչպես խոսքի, այնպես էլ մտքի զարգացման գործընթացում:

Վ. Ա. Սուխոմլինսկին գտնում էր, որ «խաղը կայծ է, որ վառում է պրպտողության և հետաքրքրասիրության կրակը»:

Մենք մեր մանկավարժական գործունեության ընթացքում նկատել ենք, որ տարրական դասարաններում քիչ տեղ է հատկացվում դիդակտիկ խաղերին, որը նպաստում է երեխաների արագ հոգնածությանը, ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության նվազմանը: Մենք փորձում ենք դիդակտիկ խաղերի միջոցով հաղթահարել 5,5-6 տարեկան երեխաների ուսումնական գործընթացի դժվարությունները:

Այսպիսով, **հետազոտական աշխատանքի նպատակն է** ներկայացնել առաջին դասարանում մեր իրականացրած դիդակտիկ խաղերի գիտամեթոդական վերլուծությունը:

Դասն առաջին դասարանում՝ խաղից մինչև ուսումնական գործունեություն

Գլուխ 1. Գրաճանաչության գործընթացի կազմակերպման փուլերը և դրանց ընթացքում իրականացվող խաղերը

Հայտնի է, որ գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու ընտրված մեթոդներին ներկայացվում են սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված որոշակի պահանջներ։ Դրանք հիմնականում պայմանավորված են հոգեկան այն գործընթացներով, որոնք ուսումնական արդյունավետության խնդրում ակնառու դեր ունեն։ Հոգեկան այդ գործընթացների՝ հիշողության, ուշադրության, մտածողության, երևակայության, կամքի և խոսքի զարգացման մակարդակով է պայմանավորված մարդու՝ տարաբնույթ գործունեության արդյունավետությունը։ Բնականաբար՝ գրաճանաչության կազմակերպման գործընթացում հարկավոր է հաշվի առնել 5,5-6 տարեկան առաջին դասարանցիների հոգեկան գործընթացների առանձնահատկությունները՝ առաջին հերթին կարևորելով ոչ թե գիտելիքների հաղորդումը, այլ նշված գործընթացների զարգացման ուղղությամբ մեթոդապես ճիշտ, հոգեբանամանկավարժական տեսանկյունով հիմնավորված աշխատանքների իրականացումը։

Մեթոդիստներն ու մանկավարժները գտնում են, ու գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պետք է հաշվի առնել նաև ուսուցման՝ մատչելիության, զննականության, հաջորդայնության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիդակտիկական, այնպես էլ շարժուն խաղերին։

Ջ. Գյուլամիրյանը գտնում է, որ գրաճանաչության գործընթացում պետք է պահպանել մանկավարժահոգեբանական մի քանի հիմնական պահանջներ.

1. «Դասի որոշակի փուլում ուսուցիչը պետք է երեխաներին բացատրի, թե իրենք ինչ պետք է անեն այդ պահին, իսկ աշխատանքի ավարտից հետո պետք է ամփոփի՝ ինչ արեցին, ինչ սովորեցին։
2. Աշակերտներին տրվող հարցերը, առաջադրանքները պետք է ձևակերպվեն հակիրճ, հստակ, հասկանալի բառերով։
3. Պետք է գերակշռեն համադասարային, փոքր խմբերով և զույգերով աշխատանքը, որոնց ժամանակ ուսուցչուհին պետք է ցույց տա իր տված առաջադրանքի կատարման նմուշները, բացատրի կատարման ընթացքը։
4. Կարդալու ուսուցման դասի ժամանակ երեխաները պետք է շատ կարդան, իսկ գրավորի դասին՝ շատ գրեն (անպայման կատարելով ֆիզկուլտդադարներ)։
5. Դասի ընթացքում պետք է մի քանի անգամ փոխել երեխաների գործունեության տեսակները (կարդալ-նկարել-գրել-երգել-խոսել-խաղալ և այլն)։
6. Դիդակտիկ նյութերը, զննական պարագաները, ուսուցման տեխնիկական միջոցները, փոխգործուն մեթոդները, խաղային առաջադրանքները պետք է օգտագործվեն տեղին և այն չափով, որքանով, որ կնպաստեն ուսուցման մատչելիության ու հետաքրքրաշարժությանը՝ առանց աշակերտներին ծանրաբեռնելու և նրանց ուշադրությունը դասի հիմնական նպատակից շեղելու։
7. Դասը պլանավորելիս պետք է նկատի ունենալ ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ յուրաքանչյուր աշակերտի պատրաստակամությունը՝ կարևորելով ուսումնական նյութի յուրացումը յուրաքանչյուր սովորողի կողմից։
8. Աշխատել բացառել դիտողություններն ու պատիժները, նախընտրությունը տալ խրախուսանքներին։
9. Ուսուցումը կազմակերպելիս ուսուցիչը չպիտի նկատի ունենա, որ աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է իր լեզվաբանական գիտելիքներով ու մանկավարժահոգեբանական հմտություններով և ձգտի մշտապես զբաղվել դրանց ձեռքբերմամբ ու կատարելագործմամբ։

10. Գրաճանաչության գործընթացում ուսուցանվող նյութի նկատմամբ երեխայի դրսևորած հետաքրքրությունը ծնվում է այդ նյութը հասկանալու մակարդակից. որքան լավ է երեխան հասկանում նյութը, այնքան նրան այն հետաքրքրում է: Որքան հետաքրքրում է, այնքան երեխան շատ է ուզում իմանալ»:[2]

Այսինքն՝ ուսումնական գործունեությունը, որն սկսած առաջին դասարանից դառնում է առաջատար, միայն այն ժամանակ կարող է նպաստել փոքրիկ դպրոցականի անձի զարգացմանը, երբ առողջ են և ավարտուն փուլում են գտնվում նրա հոգեկան գործընթացները, և երեխան կարողանում է յուրացնել որոշակի նորմեր, կատարել մտավոր որոշակի գործողություններ:

Գրաճանաչության շրջանում մենք օգտագործում ենք հետևյալ դիդակտիկ խաղերը:[3]

Խաղ N1. «Այն ո՞վ է կանչում»:

Խաղի նպատակները. Զարգացնել երեխաների ուշադրությունը, ուշիմությունը, ունկնդրելու կարողությունը, ծանոթացնել տարբեր բանաձևերին:

Ընթացքը. աշակերտներից մեկը հրավիրվում է գրատախտակի մոտ: Նա կանգնում է՝ մեջքով դեպի դասարանը: Ուսուցչուհին հերթով մոտենում է երեխաներին և շշնջում, թե ինչ միջատի, թռչունի, կենդանու ձայն պետք է հանի տվյալ երեխան: Երեխաները ձայն են տալիս՝ կու՛-կու՛, բը՛զզ…, կվա՛-կվա՛, կը՛ռ… և այլն: Գրատախտակի առջև կանգնած երեխան ոչ միայն պետք է ասի, թե բնության մեջ, որ կենդանին է այդ ձայնը հանում, այլև՝ որ երեխան է «կանչողը»:

Սխալվող երեխան պետք է կա՛մ երգի, կա՛մ արտասանի, կա՛մ հանելուկ ասի, կա՛մ…

---

[2] Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ-97», 2006, էջ 42:

[3] Գյուլամիրյան Ջ. Հ., «Զանգակ այբբենարանի» և «Ես սովորում եմ գրել» աշխատանքային տետրի մեթոդական ուղեցույց, Երևան, «Զանգակ-97», 2003, էջ 40:

Խաղ N2. «Բառաշղթա»:

Խաղի նպատակները. Զարգացնել երեխաների հնչյունային լսողությունը, բառը վերլուծելու կարողությունը, հարստացնել բառապաշարը:

Անհրաժեշտ պարագաներ. տարբեր առարկաների փոքրածավալ նկարներ:

Ընթացքը.դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի առջև լցված են առարկայական նկարներ: Ընտրել և իրար կողքի դասավորել նկարներն այնպես, որ մի նկարում պատկերված առարկայի անվան վերջին տառով սկսվի հաջորդ նկարում պատկերված առարկայի անունը:

Խաղ N4. «Գտի՛ր սխալը»:

Խաղի նպատակները. սովորեցնել երեխաներին տարբերել հնչյունները, զարգացնել բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողությունը, ձևավորել բառը վանկահնչյունային գծապատկերի միջոցով ճանաչելու ունակություն, զարգացնել երեխաների ուշիմությունը:

Անհրաժեշտ պարագաներ.առարկայական նկարներ, որոնց ետևում մատիտով տրված են նկարներում պատկերված առարկաների անվանումների գծապատկերները:

Առաջադրանք. դիտել նկարները, որոշել համապատասխան գծապատկերները, գտնել գծապատկերների սխալները և ուղղել:

Խաղ N5. «Ամբողջացրու՛ բառը»:

Խաղի նպատակները. սովորեցնել բառերը ճիշտ վանկերի բաժանել, զարգացնել բառապաշարը, դաստիարակել ուշիմություն, մտքի սրություն:

Խաղի ընթացքը. ուսուցչուհին վանկերով ասում է երեխաներին ծանոթ բառերի առաջին վանկը կամ վանկերը, երեխաները պետք է ամբողջացնեն բառը: Օրինակ՝ օ-դա-…, խըն-…, ձըկ-…:

Խաղ N6.

Գրատախտակին գրված են դուռ, լուր, կրունկ բառերը:

Խաղի ընթացքը. Ինչպես կարելի է դուռը դարձնել աշխատանքային գործիք, լուռ բառը՝ տեղեկություն, իսկ կրունկ բառը՝ թռչուն (դուր, լուր, կռունկ)։

Խաղ N7.

Գրատախտակին գրված են տուն, շուն, ձուկ բառերը։

Խաղի ընթացքը.Ինչպես կարելի է մեծ տունը փոքրացնել, մայր շունը ձագ դարձնել, հսկա ձուկը՝ փոքր ձուկ (տնակ, շնիկ, ձկնիկ)։ Յուրաքանչյուր աշակերտ իր տառադարանի տառերով կազմում է գուշակած բառը և կարդում։

Խաղ N8. «Գտի՛ր հարցի պատասխանը»։

Խաղի ընթացքը.Ուսուցչուհին բացատրում է, որ իր տված հարցին պետք է պատասխանել մեկ բառով և պատասխանը ոչ թե բարձրաձայն ասել, այլ լուռ գրել տառադարանի տառերով։ Ուսուցչուհին տալիս է տվյալ օրվա դասանյութի բովանդակության վերաբերյալ հարցեր, այնպես, որ երեխաները հիշեն իրենց կարդացածը և պատասխանեն գրավոր։ Օրինակ՝

Ուսուցչուհի- Ի՞նչ է սիրում ուտել ոզնին։ Աշակերտները պետք է գրեն խաղող բառը։

Խաղ N9. «Հանելուկի գուշակում»։

Ուսուցիչը կարդում է որևէ հանելուկ և աշակերտներին հանձնարարում է.

-Գուշակե՛ք հանելուկի պատասխանը, այն գրե՛ք տառադարանի տառերով։

Հաղթում է, նա ով առաջինը և ճիշտ կկազմի պատասխան բառը։ Հարկավոր է թողնել, որ բոլոր աշակերտները կազմեն հանելուկի պատասխան բառը, նոր երեխաներին կարդալ հարցնել։

Խաղ N10. «Ո՞ր առարկան չկա»։

Սեղանին դասավորված են միավանկ, երկվանկ, եռավանկ անուններ ունեցող առարկաներ։

Խաղի ընթացքը. Աշակերտներից մեկը հրավիրվում է սեղանի մոտ, նրան առաջարկվում է ուշադիր դիտել սեղանի վրա դրված առարկաները: Միաժամանակ նրան հայտնում են, որ իր՝ դասարանից դուրս գալուց հետո սեղանի վրայից պետք է վերցնեն առարկաներից մեկը: Ինքը պետք է գտնի՝ որ առարկան է թաքնված, և քանի վանկից է կազմված այդ առարկայի անունը: Երեխան դուրս է գնում: Պահվում է առարկաներից մեկը: Դրսում գտնվող երեխան ուսուցրի հրամանով ներս պետք է գա, ուշադիր դիտի սեղանին դրված առարկաները և որոշի՝ որ առարկան չկա, ասի նրա անունը և որոշի վանկերի քանակը: Եթե ճիշտ է որոշում, պարգևատրվում է ծափահարություններով, իսկ եթե սխալվում է դասարանի որոշմամբ պետք է կա՛մ արտասանի, կա՛մ երգի, կա՛մ հանելուկ ասի և այլն:

Խաղ N11. «Խմբային աշխատանք»:

1-4 հաշվով դասարանը բաժանվում է 4 խմբի: Յուրաքանչյուր խումբ ստանում է առարկաների նկարներ:

Առաջադրանք. տրված նկարներից առանձնացնել և դասավորել միավանկ (առաջին խումբ), երկվանկ (երկրորդ խումբ), եռավանկ (երրորդ խումբ), քառավանկ (չորրորդ խումբ) անվանումներ ունեցող առարկաների նկարները: Այնուհետև խմբի անդամները հերթով բարձրացնում են նկարները և վանկերի բաժանելով՝ արտասանում են նկարում պատկերված առարկաների անունները:

Խաղ N12.

Դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի սեղանին դրված է երկու ծրար: Մեկի մեջ լցված են առարկաների նկարներ, մյուսի մեջ՝ պատկերված առարկաների անունների գծապատկերները:

Առաջադրանք. գտնել և իրար կողքի դնել առարկաների նկարներն ու համապատասխան գծապատկերները: Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր արդյունքը:

Անցկացված խաղերը ևս մեկ անգամ մեզ համոզեցին, որ դրանց ժամանակ երեխաները դառնում են անկաշկանդ և եթե սխալ են թույլ տալիս, ապա հաջորդ անգամ ուշադիր են լինում, որ սխալ չկատաչեն։ Նրանց ամենասիրելի խաղերից մեկը «Այն ո՞վ է կանչում» խաղն է։ Նրանք շատ հետաքրքիր ու ճիշտ կարողանում են կատարել տարբեր թռչունների, կենդանիների ձայներ և գուշակել։

«Ամբողջացրու բառը» խաղի ժամանակ իմ տված վանկերից նրանք կարողանում են նույնիսկ մի քանի բառ ստեղծել (օդաչու, օդանավ, օդապարիկ)։

Ամեն օր անհամբեր սպասում են նոր նյութի հաղորդմանը, թե երբ պետք է կարդանք նոր հանելուկը, որ իրենք գուշակեն։ Երեխաները հատկապես մեծ սիրով են խաղում «Ո՞ր առարկան չկա» խաղը։ Խաղի ժամանակ ամբողջ դասարանը շունչները պահած սպասում է, թե երբ պետք է ընկերը գտնի պահած առարկան, և երբ սխալվում է, դասարանն անհամբեր սպասում է, թե ընկերն այդ օրը ինչ պետք է արտասանի, երգի, իրենք էլ նրա հետ երգում են, արտասանում։

Մեծ հետաքրքրությամբ ու սիրով աշակերտները կատարում են տարբեր խմբային աշխատանքներ։

Գլուխ 2

Զննականության դերը գրաճանաչության ընթացքում և դրա օգտագործման մանկավարժահոգեբանական սկզբունքները

5-6 տարեկան երեխաները էապես տարբերվում են 7 տարեկան երեխաներից և՛ իրենց մտավոր զարգացման մակարդակով, և՛ լեզվական կարողություններով, և՛ աշխարհըմբռնմամբ, և՛ ֆիզիկական ու ֆիզիոլոգիական հնարավորություններով, և՛ մտավոր հնարավորություններով: Ահա թե ինչու անհրաժեշտ է երեխաների հանդեպ համապատասխան մոտեցման, վերաբերմունքի, նյութի բացատրման ու ամրապնդման, ամփոփման ու մտահանգման նոր ձևեր ու եղանակներ մշակել:[4]

Հոգեբանների, մանկավարժների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 5-6 տարեկան երեխաների գործունեության կտրուկ անցումը ուսումնական գործունեության նրանց մեջ առաջ է բերում մինչ այդ ձևավորված հոգեկան գործընթացների արմատական փոփոխություն: Հենց այդ պատճառով էլ երեխայի զարգացմանն ու կրթությանը կարող ենք անուղղելի վնաս հասցնենք, եթե նրան չափազանց վաղ և ոչ ճիշտ ձևով մտցնենք այդ նոր աշխարհը:

<<Դառնալով աշակերտ, թող երեխան շարունակի այսօր անել այն, ինչ անում էր երեկ, թող նրա կյանքում նորը երևան գա աստիճանաբար և տպավորությունների հեղեղով ապշեցնի նրան>>,-ասում է Սուխոմլինսկին:[5]

Իսկ ինչ էր անում 5 տարեկան փոքրիկը երեկ. խաղում էր ու երգում, պարում էր ու արտասանում, նվագում էր ու ծեփակերտում: Ուրեմն՝ հենց այստեղից էլ հարկվոր է սկսել նրանց ուսուցումը: Վ. Ա. Սուխոմլինսկու 6 տարեկանների դպրոցը կապույտ երկնքի տակ էր, կանաչ խոտերի մեջ, ճյուղառատ տանձենիների տակ, խաղողի այգիներում, կանաչ

---

[4] Քյուրքչյան Ա. Ն. , Տեր-Գրիգորյան Լ. Ա. , <<Շողիկ>> այբբենարան, ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիտ Պրինտ, 2007, էջ 3:

[5] Սուխոմլինսկի Վ. Ա. , Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, <<Լույս>>, 1977, էջ 121:

մարգագետիններում: Մեծ մանկավարժն իր աշակերտների առաջին օրերն կազմակերպում էր այնպես, որ չլինի, թե հանկարծ որևէ մեկը հիասթափվի դպրոցից, վախենա ուսուցչից և հեռու փախչի ուսումնական գործընթացից: Չլինի թե հանկարծ ժամանակից շուտ ու սխալ ձևով երեխաներին թափանցել տալ նրանց համար ոչ տեսանելի, ոչ շոշափելի վերացականի աշխարհը:

Երեխաների ուսուցումն այս տարիքում նպատակահարմար է իրականացնել խաղի ճանապարհով: <<Ավելի շատ խաղ, ուրախություն ու զվարճանք պետք է լինի, և համեմատաբար քիչ՝ լուրջ աշխատանք, ավելի քիչ պարտադրանք, շատ՝ վարժեցում>>.-ասել է Աշոտ Տեր-Գրիգորյանը:[6]

<<Այս իմաստով 5,5-6 տարեկաններով համալրված առաջին դասարանների դասի կահավորման հիմնական բաղադրիչը դառնում է խաղալիքը, որը հանդես է գալիս, որպես զննական պարագա: Շրջապատի նման կահավորումը երեխային հիշեցնում է մանկապարտեզը>>:[7]

Խոսելով կրտսեր դպրոցականի մասին Կրուտեցկին գրում է.

….<<Ակնառուն, ցայտունը, իրականը ավելի լավ, ավելի հստակ, ավելի հուզիչ է ընկալվում քան, օրինակ,սիմվոլիկ և սխեմատիկ պատկերները>>:[8]

Խոսելով բնական նյութերով կահավորված դասերի արդյունավետության մասին՝ հարկավոր է հատկապես նշել այն դասերի լիարժեքությունը, որոնք անց են կացվում հենց բնության գրկում, այսինքն՝ որպես դասի կահավորում օգտագործվում է բնությունն իր ամբողջության մեջ: <<Ես ձգտում էի այն բանին, որ մինչև գիրք բացելը, առաջին բառը վանկ առ վանկ կարդալը, երեխաները կարդային աշխարհում ամենահրաշալի գիրքը՝ բնության գիրքը>>,- ասում է Սուխոմլինսկին:[9]

---

[6] Տեր-Գրիգորյան Ա. Ե. , Վեց տարեկան երեխաները դպրոցում, Երևան, <<Լույս>>, 1986, էջ 11:
[7] Գյուլամիրյան Ջ. Հ. , Դասի կազմակերպման առանձնահատկությունները 6 տարեկաններով համալրված առաջին դասարաններում, <<Լույս>>, 1983, էջ 21:
[8] Կրուտեցկի Վ. Ա. , Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, <<Լույս>>, 1976, էջ 89:
[9] Սուխոմլինսկի Վ. Ա. , Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, <<Լույս>>, 1997, էջ 121:

5-6 տարեկաններին շատ է դուր գալիս, երբ որպես դասի կահավորման յուրահատուկ ձև օգտագործում են իրենց իսկ ձեռքով պատրաստած դիդակտիկ նյութերը։ առաջին դասարանում, երբ անցնում էինք <<Փողոցում>> դասանյութը,[10] երեխաները ծանոթանում էին երթևեկության կանոններին, իրենց ձեռքով պատրաստել էին ստվարաթղթից լուսակիրներ և դրանց միջոցով ծանոթացան լուսակրի երեք գույների հետ։ Սովորեցին լուսակրի մասին բանաստեղծություն։

Առաջին դասարանում շաբաթական մեկ ժամ արտադասարանական ընթերցանության դաս է։ Դասերից մեկի ժամանակ տիկնիկների միջոցով բեմականացվեց Հ. Թումանյանի <<Անբան Հուռին>> հեքիաթը։ Երեխաները մեծ ուշադրությամբ հետևեցին հեքիաթի ընթացքին, որից հետո կատարեցին եզրահանգումներ, առանց դժվարության պատմեցին հեքիաթի բովանդակությունը։

<<Գորկին նշում է, որ խաղը 5.5-6 տարեկանների համար իսկական ճանապարհ է դեպի աշխարհի իմացությունը, որի մեջ ապրում են նրանք և որը կոչված են բարեփոխելու>>։

Խաղի միջոցով ընդլայնվում են 5.5-6 տարեկանների պատկերացումները շրջապատի, բնության ու կյանքի մասին։ Ա. Տեր-Գրիգորյանը իր <<Վեց

[10] Քյուրքչյան Ա. Ն. , Տեր-Գրիգորյան Լ. Ա. , <<Շողիկ>> այբբենարան, ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիտ Պրինտ, 2007, էջ 32։

տարեկան երեխաները դպրոցում>> մեթոդական նամակում ուսուցումը կազմակերպելու երկու ձև է առաջարկում՝ ուսուցում-խաղ և խաղ-ուսուցում՝ տարբեր պայմանների համար առաջին պլան մղելով համապատասխանաբար ուսուցումը կամ խաղը: Այսպես՝ << …Շաբաթվա առաջին օրերին և օրվա առաջին ժամերին, երբ աշակերտները դեռևս թարմ են, կամային ուշադրությունը բարձր է հարմար է իրականացնել առաջին սխեման, իսկ շաբաթվա վերջին օրերին, երբ երեխաները համեմատաբար հոգնած են լինում, և կամային ուշադրությունը թույլ է, կարելի է դիմել երկրորդ սխեմային՝ խաղ-ուսուցմանը, որը հեշտացնում է ուսուցանվելիք նյութի մոտեցումը:[11]

[11] Տեր-Գրիգորյան Ա. Ե., Վեց տարեկան երեխաները դպրոցում, Երևան, <<Լույս>>, 1986:

Գլուխ 3

Գրաճանաչության ընթացքում դիդակտիկ խաղերի օգտագործման իմ փորձից

Խաղ 1 <<Օճառաման>>

Դասարանի յուրաքանչյուր երեխա ունի օճառաման: Դրանց մեջ նախօրոք լցնում ենք իրենց անցած տառերով կազմած բառեր:

Առաջադրանք: Գտե՛ք օրինակ սուր բառը: Երեխաները, որպեսզի գտնեն սուր բառը, փնտրում են այն օճառամանում՝ այդ ընթացքում կարդալով նաև մնացած բառերը:

Այսպիսով, առաջարկված մեկ բառը գտնելու համար երեխաները 10-15 բառերի մեջ այն փնտրելիս մեխանիկորեն կադում են նաև մյուս՝ 10-15 բառերը: Այս խաղի ժամանակ երեխաները չեն էլ զգում, թե ինչպես կարդացին 15 բառ: Եվ, ամենակարևորը, այդ բառերը երեխաները կարդում են շշուկով կամ մտքում, որի ժամանակ սովորում են նաև շշուկով կարդալ: Խաղի ժամանակ նաև ստեղծվում է մրցութային մթնոլորտ, որն աշխուժացնում է երեխաներին և ակտիվացնում ուսումնական գործունեությունը:

Խաղ 2 <<Կտրատված տառանմուշներ>>

Երեխաներին բաժանում ենք ստվարաթղթից պատրաստված մեծ տառանմուշներ և հանձնարարում նկարչական ալբոմում դրանց օգնությամբ շրջագծել տառը, ներկել այն գունավոր մատիտներով, անվանել տառը: Կարելի է դասարանը բաժանել խմբերի, երեխաների առջև լցնել տարբեր տառեր: Հանձնարարել տառերի մեջ գտնել և ցույց տալ նորածանոթ մեծատառն ու փոքրատառը: Այս խաղի ժամանակ երեխաները ծանոթանում են նորածանոթ մասնիկներին, նոր տառը համեմատում են անցած տառերի հետ, գտնում նմանություններն ու տարբերությունները: Խաղի ժամանակ օգտագործվում են գունավոր մատիտներ, երեխաները ոչ միայն ներկում են տառամասնիկները, այլև միմյանց հետ մտքեր են փոխանակում:

Խաղ 3 <<Կտրատված տառամասնիկներ>>

Երեխաները բաժանվում են խմբերի։ Յուրաքանչյուր խումբ ստանում է տարբեր տառերի կտրատված մասնիկները։ Երեխաներից յուրաքանչյուրին պետք է բաժին ընկնի մեկ մասնիկ։ Նա պետք է որոնի տվյալ տառի մյուս մասնիկը։ Հաղթում է այն խումբը, որն առաջինն է ամբողջացնում տառը։

Այս խաղի ժամանակ երեխաները ոչ միայն ծանոթանում են նորածանոթ տառերին, այլև կրկնում են անցած տառերը՝ մտերմանալով միմյանց հետ, սովորելով համագործակցել և այլն։

Խաղ 4 <<Նկար-բառեր>>

Ստվարաթղթի վրա պատկերված է որևէ ծաղիկ, կենդանու, առարկայի նկար, իսկ ներքևում գծված է դրա վանկահնչյունային գծապատկերը։ Երեխաները պետք է ասեն, թե ինչ բառ է գծապատկերում։ Իսկ նկարը օգնում է նրանց գուշակել բառը։

Խաղ 5 <<Նկար-նախադասություններ>>

Ստվարաթղթի վրա նկարված է գործողություն կատարող մարդ կամ առարկա, իսկ ներքևում գծված է նախադասության գծապատկերը։ Երեխաները նայելով նկարին՝ պետք է ասեն, թե ինչ նախադասություն է տեղավորվում գծապատկերում։

Այս խաղը զարգացնում է երեխաների խոսքը, երևակայությունը, դիտողականությունը։

Խաղ 6 <<Ազդանշանային շրջանակներ>>

Երեխաները ստվարաթղթից պատրաստում են կարմիր և կապույտ բռնակներով շրջանակներ։ Դրանք օգտագործում ենք ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբերակման կարողության ձևավորման ժամանակ։ Երբ ուսուցչուհին արտասանում է ձայնավոր հնչյունը, նրանք բարձրացնում են կարմիր շրջանակը, իսկ երբ բաղաձայն հնչյունը՝ կապույտ շրջանակը։

Այս խաղը երեխաներին սովորեցնում է աշխատել ազդանշաններով (սինվոլիկ զննականություն), հասկանալ, մտապահել հրահանգները և ղեկավարել սեփական աշխատանքը։

Խաղ 7 <<Տառային բացիկներ>>

Անհարժեշտ պարագաներ։ 1/3 չափով ծալված թուղթ, տվյալ տառով սկսվող առարկայի նկար, տառամասնիկներ։

Առաջադրանք։ Երեխաներին տալիս ենք անհրաժեշտ պարագաները։ Նրանք պետք է ծալված ստվարաթղթի վրա կպցնեն առարկայի նկարը, իսկ բացիկի ներսում գծված տողի վրա կպցնեն տառամասնիկները։

Եզրակացություններ

Մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. 5,5-6 տարեկաններով համալրված առաջին դասարանում գրաճանաչության ընթացքում անհրաժեշտ է ողջ աշխատանքն իրականացնել՝ օգտագործելով ինչպես դիդակտիկ, այնպես էլ շարժուն խաղեր։

2. Դիդակտիկ խաղերն օգտագործելիս պետք է նկատի ունենալ նրանց իրականացման համակարգայնությունը ու երեխաների տարիքային առանձնահատկությունները։

3. Դիդակտիկ նյութը չարաշահել չի կարելի։ Կարելի է որոշել **ե՞րբ և ինչպե՞ս** պետք է օգտագործել դրանք։

4. Պետք է նկատի ունենալ, որ դիդակտիկ խաղերը նպաստում են նաև աշակերտների միջանձնային հարաբերությունների կարգավորման և անձնային կարևոր որակների ձևավորմանը և ըստ այդ նպատակների էլ կազմակերպել այդ խաղերը։

5. Դիդակտիկ նյութերը և խաղերը կարելի է օգտագործել ինչպես նոր նյութի հաղորդման, այնպես էլ անցածի ամրակայման և յուրացումը ստուգելու նպատակով։

6. Դիդակտիկ նյութերը պետք է պատրաստվեն մեթոդապես ճիշտ, ճաշակով և երեխաներին մատչելի ու հասանելի։

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ «Կրթակարգ», «Անտարես», Երևան, 2004։
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ-97», 2006։
3. Գյուլամիրյան Ջ. Հ., «Զանգակ այբբենարանի» և «Ես սովորում եմ գրել» աշխատանքային տետրի մեթոդական ուղեցույց, Երևան, «Զանգակ-97», 2003։
4. Գյուլամիրյան Ջ. Հ., Դասի կազմակերպման առանձնահատկությունները 6 տարեկաններով համալրված առաջին դասարաններում, <<Լույս>>, 1983։
5. Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, <<Լույս>>, 1976։
6. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, <<Լույս>>, 1997։
7. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Վեց տարեկան երեխաները դպրոցում, Երևան, <<Լույս>>, 1986։
8. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., <<Շողիկ>> այբբենարան, ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիտ Պրինտ, 2007։